



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ
Հայաստանի ՄՌ Ասոցիացիայի կողմից

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022

Հայաստանի ՄԹ Ասոցիացիա

«Նոր Էջ»

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության
նախագծի տարեկան հաշվետվություն

Երևան 2022



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Նոր Էջ» Նախագծի մասին	3
Համագործակցություններ.....	6
2022թ. ընթացքում իրականացված աշխատանքներ.....	8
Շահառուների կողմից «Նոր Էջ» Նախագծի գնահատումն ու նրանց ակնկալիքները	13
Իրականացված ուսումնասիրություններ ու հետազոտություններ	17
2022թ. ֆինանսական հաշվետվություն.....	20
2023թ. մեր գործունեության ուղղությունները	22
Հայաստանի ՄՌ Ասոցիացիայի մասին	24

«Նոր Էջ» Նախագծի մասին

2020թ.-ի մարտական գործողությունների ավարտից անմիջապես հետո մեկնարկեց «ՄՌ Ասոցիացիա» ՀԿ-ի հեղինակային «Նոր Էջ» նախագիծը: Նույնաբեր-դեկտեմբեր ամիսների կազմակերպչական աշխատանքներից հետո 2021թ.-ի հունվարին սկսվեցին նախագծի իրականացման աշխատանքները:

Նախագծի **նպատակն** է պատերազմի մասնակիցներին և զինհաշմանդամներին սեփական կարողությունները զարգացնելու, հստակ գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու հնարավորություն ընձեռել՝ այդպիսով նպաստելով լիարժեք աշխատանքային կյանք վերադառնալուն:


Նախագիծն օգնում է զարգանալ և կրթվել՝ ելնելով երիտասարդների ցանկություններից և աշխատաշուկայի պահանջներից:

Նախագծի մեկնարկից հետո առաջին երեք ամսվա ընթացքում իրականացվեց շահառուների և հետաքրքրված գործատուների կարիքների մանրամասն գնահատում: Արդյունքում, **հավաքվեց շահառուների վերաբերյալ խորքային բազա**, որը բացի ժողովրդագրական տվյալներից պարունակում է նաև տեղեկատվություն երիտասարդների կրթության, հետաքրքրությունների, կարիքների, ունակությունների և կարողությունների մասին:

Ներկա պահին նախագիծն շարունակաբար գրանցվող մասնակիցների թիվը ձգտում է 2000-ի, որից **1450-ի համար իրականացվել են կարիքների գնահատման աշխատանքներ**:

Շահառուների **մեծ մասը՝ 97.45%-ը, կազմում են 2020թ. պատերազմի մասնակիցները**, սակայն փոքր խմբերով կան 2016թ. ապրիլյան պատերազմի մասնակիցներ (2.04%) և տարբեր տարիներին զինվորական ծառայության ընթացքում տարբեր մարտերի մասնակցած, վիրավորում ստացած և/կամ հաշմանդամություն ձեռք բերած երիտասարդներ (0.51%):


Նախագծի գործունեությունը ծավալվում է **ՀՀ ողջ տարածքում ու Արցախում**:



Ընդհանուր առմամբ, 1450 շահառուների 33.98%-ը մայրաքաղաքից է: Ըստ շահառուների բնակի հաջորդ տեղում Շիրակի և Կոտայքի մարզերն են՝ 10.86% և 10.03%: Թվաքանակով ամենաքիչ շահառուներ ունենք Վայոց ձորի մարզից՝ 1.74%: Մյուս մարզերից շահառուների թվաքանակը տատանվում է 3-8%-ի սահմաններում: Շահառուների 3.27%-ն Արցախից է:

Նկ. 1. Շահառուների բաշխվածությունն ըստ մարզերի

Շահառուների կեսից ավելին մասնակցել են 2020թ. մարտական գործողություններին զինծառայության ընթացքում և այժմ 20-22 տարեկան են: Շահառուների 32%-ը 23-29 տարեկան է, իսկ 10%-ը՝ 30 տարեկանից մեծ:



Նկ. 2. Շահառուների բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի

Նախագծի մեկնարկից ի վեր՝ 2022թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ, **շահառուներից 836-ն արդեն ավարտել են** որևէ դասընթաց կամ ծրագիր, **մոտ 80-ը ներկա պահին մասնակցում են** տարատեսակ դասընթացների: Ինչպես նաև, 52 երիտասարդ ընդունվել է աշխատանքի: Այդ թվում, 30-ից ավել շահառու մասնակցել է «Առաջնորդության սիմֆոնիա» համաժողովին, որտեղ միջազգային ճանաչում ունեցող խոսնակներին լսելու և նրանց հետ շփվելու հնարավորություն է ունեցել:

Նախագծի հաջողության մասին են վկայում քանակական արդյունքները, շահառուներից ամեն օր ստացվող արձագանքները և նոր դիմորդների չընդհատվող հոսքը: Հարկ է նշել, որ 2022թ.-ի ընթացքում նոր շահառուների ներգրավման ուղղությամբ որևէ նպատակային աշխատանք չի արվել. դիմել են նախագծի շահառուների ընկերները, բարեկամները և ծանոթները՝ հենց շահառուների խորհրդով և ուղղորդմամբ: 2022թ. ընթացքում ծրագրին **միացել է ամսական միջինում 24 նոր շահառու**, ինչը վկայում է ծրագրի արդյունավետության և կայուն հեղինակության մասին:

Կարևոր է առանձին շեշտադրել, որ մեկ անգամ մեր նախագծի շահառու դարձած երիտասարդները դուրս չեն գալիս ծրագրից, չնայած նրանց ակտիվությունն ունի պարբերական բնույթ: Այլ կերպ ասած՝ կարող ենք պնդել, որ «Նոր Էջ» նախագիծը ձեռք է բերել ճանաչում՝ որպես կրթական նախագիծ, և շահառուների վստահությունը: Նախագծի թիմը ճկունություն է ցուցաբերում նաև շահառուների կողմից հնչող առաջարկները քննարկելու և հնարավորության դեպքում դրանք իրականացնելու գործում:

Նախագիծը հաջողվեց. արձագանքների վերլուծությունը փաստում է, որ նախագիծը մասնակիցների մեծ մասի ընդհանուր կենսագործունեության և աշխարհընկալման վրա էական դրական ազդեցություն է թողել:

Համագործակցություններ


2021թ. «Նոր Էջ» Նախագծի հիմնական նվիրատուն դարձավ «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ-ն, իսկ 2022թ. որպես հիմնական նվիրատու հանդես եկավ «Երևան իմ սեր» հիմնադրամը: Նաև զուգահեռ իրականացվեց դրամահավաք «ՌեԱրմենիա» բարեգործական հիմնադրամի հարթակում:

Նաև, 2022թ. «Դիակոնիա» հիմնադրամը ֆինանսավորեց մեր շահառուների ուսումը «Պանարմենիան» մեդիա դպրոցում:

Մանրակրկտորեն արված հետազոտության շնորհիվ հավաքվեց պատերազմի մասնակցած երիտասարդների **համապարփակ ընդարձակ բազա**, և միևնույն ժամանակ պարզ դարձավ, որ օր առ օր ավելանում են նրանց ուղղված ծրագրերը: Այդ իսկ պատճառով մեր Նախաձեռնությամբ Նախագծի սկզբից ևեթ **հաստատվեցին բազմաթիվ գործընկերային կապեր** տարբեր կազմակերպությունների և գործատուների հետ:

Այսպիսով, մենք մեծ պատրաստակամությամբ մեզ վրա վերցրեցինք պատերազմի մասնակիցների հետ աշխատող կազմակերպությունների և շահառուների միջև **կապող օղակ** ծառայելու գործառույթը:

Հարկ է նշել, որ գործունեության գրեթե երկու տարիների ընթացքում ձեռք են բերվել **250-ից ավել** համագործակցություններ տարբեր կազմակերպությունների, անհատների, հիմնադրամների և ընկերությունների հետ, որոնցից **ակտիվորեն ներգրավվել են 120-ը**:



Նկ. 3. Ակտիվ գործընկերությունների բաշխվածությունն ըստ ոլորտների

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց նույն խմբի շահառուներին ուղղված ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցությանը: Մասնավորապես, մենք վստահելի կապեր ստեղծեցինք այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «Պոնտեմ Լաբ»-ը, «Բարձունք» ՀԿ-ն, «ԽԵԼԶ» կրթական հիմնադրամը, «Արեն Մեհրաբյան» հիմնադրամը, «Ապագա» հիմնադրամը, «4090 Բարեգործական» հիմնադրամը, Հայ-կրթական հիմնարկությունը, «Զինվորի տուն» ԲՀԿ-ն, «Նոր Հայք» ՀԿ-ն, «Հայկական Կարիտաս» ՀԿ-ն, ՏՀՏ գործատուների միությունը, Զինծառայողների Ապահովագրության հիմնադրամը, «FASF» հիմնադրամը և այլն:

Բացի այդ, մեզ հաջողվեց կապեր հաստատել մի քանի տասնյակից ավել անհատների և ընկերությունների հետ, որոնց առօրյա գործունեությունը կապված չէ պատերազմի մասնակիցների հետ, սակայն ԿՍՊ շրջանակներում հայտնեցին մեր շահառուների հետ պարբերաբար աշխատելու մեծ պատրաստակամություն: Այդ գործընկերների շարքում են «Յունիտրանս» ՍՊԸ-ն, «Էքսելիստ» ՍՊԸ-ն, «Կոնսիլյերի» ՍՊԸ-ն, «Global IT»-ն, «My Photo-tour Armenia»-ն, «NurArt Gallery»-ն, «Cascade People & Business» ՓԲԸ-ն, Specialized English School անգլերենի ուսուցման կենտրոնը, «WeConstruct» ՍՊԸ-ն, Չեբրա ավտոդպրոցը, X-Drive ավտոդպրոցը, Պանարմենիան մեդիա դպրոցը, Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան, Ազգային ագրարային համալսարանը, Հայ-ռուսական համալսարանը, ՀՀ Կենտրոնական բանկը և այլ ընկերություններ, նաև մի շարք անհատ փորձագետներ և մասնագետներ:

Բազմապիսի համագործակցությունների շնորհիվ միայն 2022թ. ընթացքում **հաջողվել է ապահովել 129 շահառուների անվճար մասնակցությունը** մի քանի տասնյակ տարբեր դասընթացների:


Մեր շահառուներին աշխատանքի են ընդունել մի շարք ընկերություններ, ինչպես օրինակ «Բարսիս» ՍՊԸ-ն, «ՖԻՄ մենեջմենթ» ՍՊԸ-ն, «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն, «Մոբբիս» ՍՊԸ-ն, «Յունիտրանս» ՍՊԸ-ն, «Ինստիգեյթ Ռոբոտիքս» ՓԲԸ-ն, «Յուբոմ» ՓԲԸ-ն, «Հայփոստ» ՓԲԸ-ն, «Set Energy» ՍՊԸ-ն, «Երեմյան Փրոջեքթս» ՍՊԸ-ն, «Պատրիոտ» անվտանգության ծառայությունը, «Dispatch Experts» ՍՊԸ-ն, «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ն, «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն:

Արձանագրենք, որ խորքային բազա ունենալը հնարավորություն է ստեղծում, որպեսզի և՛ մենք ըստ շահառուների կարիքների գտնենք մեզ անհրաժեշտ գործընկերներին, և՛ նույն թիրախային խմբի համար ծրագիր իրականացնող մյուս կազմակերպությունները դիմեն մեզ շահառուներ ներգրավելու համար:

2022թ. ընթացքում իրականացված աշխատանքներ

2022թ.-ի ընթացքում Նախագծի գործունեությունը հնարավոր դարձավ գլխավորապես «Երևան իմ սեր» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Նախագծի գործունեությանն աջակցելու համար որոշակի գումար հավաքվեց Նաև «ՌեԱրմենիա» հարթակում:

Այս ընթացքում կազմակերպվել և իրագործվել են 97 վճարվող և անվճար դասընթացներ, որոնցից 72-ն արդեն ավարտվել են, իսկ 25-ն ընթացքի մեջ են: Ավարտված դասընթացներին մասնակցել է 318 շահառու, իսկ 73-ն այժմ մասնակցում են տարբեր դասընթացների:



Նկ. 4. Շահառուների բաշխվածությունն ըստ դասընթացի կարգավիճակի և ֆինանսավորման տիպի

Բացի դասընթացները, 130 շահառու մասնակցել է աշխատանք գտնելուն ուղղված գործընթացներին (տեղեկատվության տրամադրում, CV կազմելու խորհրդատվություն, գործատուների ու շահառուների միջև կապի հաստատում և այլն): Իսկ շահառուներից 32-ին տրամադրվել է աջակցություն ուսման վարձի փոխհատուցման դիմելիս:


Դասընթացներին զուգահեռ ամենօրյա ռեժիմով շահառուների հետ տարվում են այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են՝

- ✓ նոր շահառուների կարիքների գնահատումը,
- ✓ փաստաթղթային և այլ հարցերում խորհրդատվությունը,
- ✓ շահառուների հետ մշտական կապ պահելը,
- ✓ գործընկերների հետ մշտական կապ պահելը,
- ✓ պատերազմին մասնակցած անձանց վերաբերող նորություններին հետևելը և շահառուների իրազեկումը,
- ✓ պարբերական գնահատումները և մշտադիտարկումը:

Մեր նախագծի շրջանակներում շահառուների համար կազմակերպվում են տարբեր ոլորտների դասընթացներ, քանի որ շահառուների պահանջները բավական բազմազան են: Շահառուներից ստացվող տեղեկատվության համաձայն՝ առավել պահանջված ոլորտներն են ծրագրավորումը, օտար լեզուները (հիմնականում անգլերեն), գրաֆիկ դիզայնը, մարքեթինգը և ֆինանսները: Այս պահին ընթացքի մեջ են վարորդական իրավունքի տեսական և գործնական, անգլերենի, մարքեթինգի և վաճառքի, ծրագրավորման, SMM-ի, մեդիա ոլորտի դասընթացներ:

Հետաքրքրական փաստ է, որ շահառուների կողմից վարորդական իրավունքի դասընթացները չեն նշվում որպես առաջնային ցանկություն, սակայն երբ դասընթացը կազմակերպվում է, դրան մասնակցելու հայտ ներկայացնում են մեծ թվով շահառուներ: Ընդ որում, մասնակցելիության տոկոսը բավական բարձր է՝ 85%-ից ավել: Այս պատկերը պայմանավորված է մի քանի գործոններով, որոնցից ամենաձանր կշիռ ունեցողներից մեկն այն է, որ երիտասարդներին շատ հաճախ անհրաժեշտ են պարզ հմտություններ, որոնք, սակայն, Էականորեն դյուրացնում են մոտքը դեպի աշխատաշուկա: Հետևաբար, մեր նախագծի նման նախագծերը դիտարկվում են որպես նոր հմտություն ձեռք բերելու հնարավորություն, որի համար իրենց առօրյայում ժամանակ և գումար չէր գտնվում:

Ստորև ներկայացված է 2022թ. ընթացքում իրականացված դասընթացների բաշխումն ըստ ոլորտների:



Նկ. 5. Իրականացված դասընթացների քանակի բաշխվածությունն ըստ ոլորտների

Հաջորդիվ առավել մանրամասն ներկայացված են մի քանի դասընթացներ, որոնք մասնակցելիության առավել բարձր ցուցանիշ ունեն և իրականացվել են Հայաստանի տարբեր քաղաքներում:

1. Բանակցություններ, հաղորդակցում, առաջնորդություն («Մեր սերունդը» ծրագիր)

«Բանակցություններ, հաղորդակցում, առաջնորդություն» դասընթացն իրականացվել է Երևանում և Ստեփանակերտում երկուական և Վանաձորում մեկ անգամ: Ընդհանուր առմամբ մասնակցել է 52 շահառու. յուրաքանչյուր խմբում ներգրավված է 8-12-ական շահառու: Դասընթացի շնորհիվ մասնակիցներն ստացել են գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են ինչպես մասնագիտական գործունեության մեջ, այնպես էլ առօրյա կյանքում: Հարկ է նշել, որ բացի բուն գիտելիքներից դասընթացը նպաստել է շահառուների միջև փոխհարաբերությունների ձևավորմանը և զարգացմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը և ընկերական հարաբերությունների ձևավորմանը:

2. Ծրագրավորում

Հայաստանում մեծ քանակի SS խոշոր ընկերություններ ունեն կից գործող ուսումնական կենտրոններ, կրթական ծրագրեր կամ համագործակցում են այլ ուսումնական կենտրոնների հետ՝ կազմակերպելով անվճար ուսուցում և պրակտիկա: Սա հաշվի առնելով՝ նպատակահարմար ենք գտել համագործակցել նշված ընկերությունների հետ և ծրագրավորմամբ հետաքրքրված շահառուներին ուղղորդել կազմակերպվող դասընթացներին մասնակցելու: Տարբեր դասընթացների մասնակցել և մասնակցում է 52 շահառու: Ընդհանուր առմամբ շահառուները մասնակցել են ծրագրավորման հետևյալ ուղղությունների դասընթացների.

- Front-end development, Back-end development
- LESS, Bootstrap, JavaScript (jQuery / React)
- C++, Python, Java, QA
- IT PM
- Software Engineering in Web
- Solid Works
- UI/UX design / Գրաֆիկ դիզայն

3. Անգլերեն

Անգլերենը շահառուների կողմից ամենապահանջված դասընթացներից է, քանի որ անգլերենի իմացությունը մարդուն առավել մրցունակ է դարձնում: 2022թ.-ի ընթացքում կազմակերպվել է լսարանային չորս դասընթաց երևանում և մեկ առցանց դասընթաց, որը նաև մարզերի շահառուներին ընդգրկելու հնարավորություն է տվել: Տարբեր դասընթացների մասնակցել և մասնակցում է 33 շահառու:

4. Վարորդական իրավունքի տեսական ու գործնական դասընթացներ

Վարորդական իրավունքի դասընթացներ են իրականացվում Երևան, Աբովյան, Արմավիր, Իջևան, Հրազդան, Վանաձոր, Աշտարակ, Գյումրի և Կապան քաղաքներում: Շահառուներին հնարավորություն է տրվել, ըստ իրենց ցանկության, մասնակցել տեսական և/կամ գործնական դասընթացների:

Վարևոր է այն հանգամանքը, որ այս դասընթացին մասնակցությունը ենթադրում է շահառուի կողմից վարձավճարի մի մասի վճարում: Մեր գործունեության ընթացքում պարզ դարձավ, որ սա ևս գործող մոդել է, որը նպաստում է շահառուների պատասխանատվության զգացման մեծացմանը, և իհարկե մասամբ թեթևացնում է նախագծի ֆինանսական բեռը: Վարորդական

իրավունքի գործնական և տեսական դասընթացներն ավարտել է 89 շահառու: Ներկա պահին ընթացող դասընթացներին մասնակցում է 42 շահառու:

Նշենք, որ վարորդական իրավունքի դասընթացի կազմակերպումն ունի նաև կարևոր հանրային ազդեցություն, այն է՝ նպաստել այն գաղափարի տարածմանը, որ մեքենա վարելու համար ևս անհրաժեշտ է մասնագիտական ուսուցում, որպեսզի ունենանք ճանապարհային երթևեկության կանոններին գիտակցաբար տիրապետող վարորդներ:

5. «Ձեռներեցությունը 0-ից»

Հաշվի առնելով շահառուների հետաքրքրվածությունը բիզնես ոլորտի հանդեպ, և այն փաստը, որ նրանց ճնշող մեծամասնությունը չունի բիզնես սկսելու և վարելու համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և ֆինանսական միջոցներ՝ համագործակցության շրջանակներում կազմակերպվել է «Ձեռներեցությունը 0-ից» դասընթացը, որին մասնակցել է 13 շահառու: Դասընթացի նպատակն էր բիզնեսը վարելու վերաբերյալ ելակետային գիտելիքներ տալ և շահառուներին օգնել կազմել գրագետ բիզնես ծրագիր, ինչը կմեծացնի ֆինանսավորում ստանալու հավանականությունը:


Դասընթացը բաղկացած էր հետևյալ բաժիններից՝

- բիզնես պլանի կառուցվածք, բաղկացուցիչներ և առանձնահատկություններ,
- շուկայի ուսումնասիրություն,
- ֆինանսական գիտելիքներ,
- մարքեթինգի գիտելիքներ:

Մասնակիցներին հնարավորություն է տրվել աշխատել իրական բիզնես ծրագրի վրա և ընթացիկ հարցերը քննարկել մասնագետների հետ: Դասընթացի ավարտին մասնակիցների միայն փոքր մասն ուներ բիզնես ծրագիր, որոնցից մեկը դիմել է ֆինանսավորման համար, իսկ երեքը կազմել են աշխատանքային խումբ և մշակել ծրագիր, որը փորձում են իրագործել: Այս տեսանկյունից դասընթացը յուրօրինակ մարտահրավեր էր շահառուների՝ ցանկություններից գործողությունների անցնելու պատրաստակամությունը չափելու համար:

Շահառուների կողմից «Նոր Էջ» նախագծի գնահատումն ու նրանց ակնկալիքները

2022թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին իրականացվել է նախագծի գնահատում քանակական հետազոտության միջոցով (հարցաթերթի մեթոդիկայով): Հետազոտությանը մասնակցել է 542 շահառու:




Նկ. 6. Հարցման մասնակիցների բաշխվածությունը ըստ հաշվառման վայրի

Այս հետազոտության կարևորությունն այն է, որ 44-օրյա պատերազմից անցել էր մեկուկես տարի, շահառուների կյանքում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ՝ թե՛ առողջական, թե՛ կրթական, թե՛ զբաղվածության առումով: Գործունեությունը հասցեական շարունակելու համար շահառուների հետ շարունակական կապ պահպանելու անհրաժեշտություն կա:


Հետազոտությունը երկու նպատակ էր հետապնդում.

1. գնահատել կատարված աշխատանքը, բացահայտել առկա խնդիրները,
2. բացահայտել շահառուների փոփոխված կարիքները և մշակել զարգացման ուղղությունները, որոնցով շարժվելու դեպքում նախագիծն ավելի արդյունավետ և օգտակար կլինի:

Հարցմանը մասնակցած շահառուներից 285-ն արդեն մասնակցել է նախագծի կողմից կազմակերպված առնվազն մեկ դասընթացի, վեբինարի կամ ծրագրի: Ծահառուները գնահատել են նախագծից ընդհանուր գոհունակությունը և շահառուների հետ հաղորդակցումն ապահովող Viber-ի խմբի արդյունավետությունը: Ճնշող մեծամասնությունը գոհ է և՛ նախագծից, և՛ խմբի աշխատանքից: Այդ իսկ պատճառով ստացվել է գրեթե նույն պատկերը (Տե՛ս Նկ. 7 և 8):



Նկ. 7. Ծահառուների ընդհանուր գոհունակությունը նախագծից, որտեղ 1-ը՝ գոհ չեմ, 5-ը՝ շատ գոհ եմ



Նկ. 8. Ծահառուների գոհունակությունը Viber խմբից, որտեղ 1-ը՝ գոհ չեմ, 5-ը՝ շատ գոհ եմ


Նախագծից գոհունակությունը «3» և ցածր գնահատող շահառուները որպես պատճառ նշել են հիմնականում երեք գործոն՝ իրենց հարմար առաջարկ չեն գտել, աշխատանք չեն գտել, երկար են սպասել դասընթացին: Արձագանքելով բերված պատճառներին՝ հարկ է նշել, որ երեքն էլ հավաստի են և իրական, սակայն նաև օրինաչափ են, քանի որ.

- ✓ մեր առաջարկները հիմնված են շահառուների կարիքների գնահատման արդյունքների վրա, սակայն դրանք ընդհանրացված են, ինչի հետևանքով հնարավոր է առանձին վերցված սպասելիքների չիրականացումը,
- ✓ թեև բոլոր շահառուները տեղեկացվում են, որ «Նոր էջ»-ը կրթական նախագիծ է, այնուամենայնիվ նրանց մի մասի միակ ակնկալիքը աշխատանք գտնելն է, որը մեր թիրախային նպատակը չէ,
- ✓ որոշ սպեցիֆիկ դասընթացների կազմակերպչական աշխատանքներն իսկապես երկար ժամանակ են պահանջում:

«4» և «5» գնահատած շահառուները նշել են գոհունակության մի շարք պատճառներ, որոնցից ավելի հաճախ հանդիպողներն են՝

- ✓ դասընթացների և ծրագրերի որակը և ստացած գիտելիքները,
- ✓ տարատեսակ ծրագրերի մասին տեղեկատվության տրամադրումը,
- ✓ իրենց նկատմամբ ցուցաբերված ուշադրությունը, նախագծի թիմի վերաբերմունքը և սրտացավությունը, անհատական մոտեցումը,
- ✓ պատերազմի մասնակիցներին տրված հնարավորությունները, առաջարկների բազմազանությունը,
- ✓ նախագծի շնորհիվ ունեցած անձնային զարգացումը և ադապտացիան:

Հարցվողներից 257-ը դեռ որևէ դասընթացի չեն մասնակցել հետևյալ պատճառներով՝ միացել են նախագծին աշխատանք գտնելու նպատակով, չեն գտել իրենց համապատասխան դասընթաց կամ ծրագիր, ժամանակ չեն ունեցել, տվյալ դասընթացի համար խումբ չի հավաքվել:



Նախագծի աշխատանքները շարունակելու համար անհրաժեշտ էր հասկանալ շահառուների ներկայիս կարիքները: Ըստ ելույթի, շահառուների կողմից դուրս է բերվել չորս հիմնական կարիք (Տե՛ս Նկ. 9):


Նկ. 9. Շահառուների ակնկալիքների բաշխվածությունը

Քանի որ մարտական գործողությունների ավարտից հետո տարբեր ընկերություններ և կազմակերպություններ մշակեցին տարատեսակ ծրագրեր մասնակիցների համար, մեր նախագծի թիմն ակտիվորեն հետևում է նորություններին և հնարավորության դեպքում համագործակցում և ուղղորդում շահառուներին: Հետևաբար, զարմանալի չէ, որ 105 շահառու նշել է, որ ցանկանում է մնալ նախագծում, որպեսզի տեղյակ լինի նորություններից:

«Նոր էջ» նախագիծը չի զբաղվում շահառուների աշխատանքի տեղավորմամբ, այդուհանդերձ 136 շահառու հստակ նշել է, որ իր ակնկալիքն աշխատանք գտնելն է:

Բիզնեսի թեմայով հետաքրքրված 80 շահառուներն ունեն երկու հիմնական սպասելիք՝ կա՛մ ցանկանում են սովորել մեկ հստակ մասնագիտություն (օրինակ՝ մեղվաբուծություն), որի վրա հենվելով հետո կստեղծեն բիզնես, կա՛մ ցանկանում են սովորել բիզնես գործընթացները, վաճառքի նրբությունները և այլ հմտություններ, որոնք անհրաժեշտ են բիզնեսը գրագետ վարելու համար:

Ինչ վերաբերում է մասնագիտական դասընթացներին, ապա կարելի է ընդհանրացնելով ասել, որ պահանջված են մի քանի հիմնական ուղղություններ (Տե՛ս Նկ. 10): Առավել պահանջված ուղղությունը ծրագրավորումն է, որտեղ չկա նաև առաջարկի պակաս: Բացի ստորև ներկայացված պատկերից, կա նաև արվեստի, սպորտի, մեդիա ոլորտի, կառավարման, արհեստի, նախագծերի կառավարման դասընթացների պահանջարկ:



Նկ. 10. Շահառուների կողմից ակնկալվող դասընթացները

Իրականացված ուսումնասիրություններ ու հետազոտություններ

Ի սկզբանե, շահառուների կարիքների գնահատում իրականացնելուց զատ, այլ խնդիրների ուսումնասիրությունը և հետազոտությունը «Նոր Էջ» նախագծի առաջնային նպատակների շարքում չէր: Սակայն երկարատև աշխատանքի ընթացքում պարզ դարձավ, որ հնարավոր չէ չանդրադառնալ այդ հարցերին, քանի որ, առաջին հերթին, դա ամենապարզ ձևով դժվարացնում է մեր ամենօրյա աշխատանքը, և ընդհանրապես, խնդիրները բազմաթիվ են և շատ տարբեր ոլորտներում, ուստի մենք պատրաստ ենք մեր ներդրումն ունենալ դաշտի կարգավորման գործում: Հարկ է արձանագրել, որ գրեթե ամեն օր գրուցում ենք տարբեր շահառուների հետ այս թեմաներով: Կարևորելով պատերազմի մասնակցած երիտասարդների խնդիրների վերհանումը՝ նախագծի թիմը մշակեց և իրականացրեց հետազոտական աշխատանք երկու ուղղություններով.

- ✓ խնդիրներ, որոնք կապված են պատերազմի մասնակցությունը հավաստող փաստաթղթերի հետ,
- ✓ խնդիրներ, որոնց բախվում են վիրավորում ստացած անձինք:

Ստորև հակիրճ ներկայացնենք վերոնշյալ հետազոտությունների արդյունքները:

1. Պատերազմի մասնակցությունը հավաստող փաստաթղթերում առկա խնդիրների մասին

Շահառուների հետ աշխատանքն սկսում ենք պատերազմի մասնակցությունը հաստատող համապատասխան փաստաթղթերի ստուգմամբ. հաշվի առնելով նախագծի բնույթը դա ունի առաջնային կարևորություն: Փաստաթղթերի հետ կապված խնդիրները շահառուների մի մասի մոտ առ այսօր լուծված չեն, թեև արդեն անցել է երկու տարի: Կարծում ենք՝ շահառուների խնդիրների վերաբերյալ մեր ունեցած տեղեկատվությունը կարող է օգտակար լինել համապատասխան իրավասու կառույցներին իրենց գործունեության մեջ: Ուստի, պատրաստվել է զեկույց պատերազմի մասնակցությունը հավաստող փաստաթղթերում առկա խնդիրների վերաբերյալ, որը հիմնված է նախագծի գործունեության ընթացքում շահառուներից ստացված տեղեկատվության և հավաքագրված փաստաթղթերի վերլուծության վրա: Չեկույցը ներկայացրել ենք ՀՀ Պաշտպանության նախարարություն, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն:

2. Վիրավորում ստացած և կամ հաշմանդամություն ունեցող անձանց դժվարությունների բացահայտում

Հետազոտության նպատակն է բացահայտել այն խնդիրները, որոնց բախվում են վիրավորում ստացած և/կամ հաշմանդամություն ունեցող պատերազմի մասնակիցները: Այդ խնդիրներն անմիջականորեն ազդում են երիտասարդների կենսագործունեության, մոտիվացիայի, հիշողության, ուշադրության կենտրոնացման, կրթական և աշխատանքային գործունեության վրա: Իրականացվել է քանակական և որակական հետազոտություն հարցաթերթի և հարցազրույցների մեթոդիկաներով: Քանակական հետազոտությանը մասնակցել է 305 շահառու: Ինչպես նշում են շահառուները, նրանք բախվում են երկու խումբ խնդիրների, որոնցից մեկը վերաբերում է առօրյա կյանքին, մյուսը՝ պետական կառույցների հետ հարաբերություններին:

Մասնավորապես առօրյա կյանքում կանգնում են հետևյալ խնդիրների առաջ.

- ✓ բոլոր զբաղմունքները կենտրոնացած են Երևանում, մարզերում քիչ են,
- ✓ աշխատելու պատճառով սովորելու ժամանակ չունեն,
- ✓ դեռ չեն հարմարվել վիրավորման հետևանքով իրենց մարմնի փոփոխություններին, հոգեբանորեն դեռ հավասարակշռված չեն
- ✓ ունեն բուժվելու կարիք, բայց ժամանակ կամ գումար չունեն, մյուս կողմից էլ շատ ժամանակ են ծախսում բուժումների վրա,
- ✓ իրենց վրա բացասաբար է ազդում մարդկանց չափազանցված վերաբերմունքը՝ և լավ, և վատ առումով,
- ✓ փողոցները և տրանսպորտը հարմարեցված չեն:

Իսկ պետական կառույցների հետ հարաբերվելիս առաջանում են հետևյալ խնդիրները.

- ✓ անընդհատ մի տեղից մյուսն են ուղարկում,
- ✓ հերթերը շատ են ու անկանոն,
- ✓ թղթաբանությունը շատ է, որևէ հարց լուծելը շատ երկար է տևում,
- ✓ չեն վստահում պետական կառույցներին,
- ✓ չգիտեն՝ որ դեպքում ուր դիմել, տեղեկատվությունը հասկանալի չէ:

Վերոնշյալ խնդիրները հաճախ համակցված են և շահառուներից յուրաքանչյուրը բախվում է մեկից ավել խնդիրների: Այս խնդիրներն այնքան սուր են արտահայտված, որ հաճախ դրա պատճառով մարտական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած և առողջական խնդիրներ ձեռք բերած անձինք

հրաժարվում են իրենց հասանելիք աջակցությունից և իրենց իրավունքների իրացումից:

Որակական հետազոտությունն իրականացվել է ֆոկլոր խմբերի և հարցազրույցների միջոցով: Շահառուների հիմնական խնդիրներն ու մտավախությունները վերաբերում են աշխատանքային պայմաններին, գործատուների ոչ ճկուն լինելուն, միջանձնային հարաբերություններում խտրականությանը, հասարակության կողմից ծայրահեղացված գերիսնամբին և/կամ անտարբերությանը, այլ անձանց կողմից խարանավորմանը և իրենց անձնական սահմանների խախտմանը:

2022թ. ֆինանսական հաշվետվություն

2022թ. աշխատանքների համար տրամադրված ֆինանսական միջոցներն օգտագործվել են երեք հոդվածով.

- 1) դասընթացների և կրթական ծրագրերի կազմակերպում, որը կազմում է ընդհանուր ծախսի 63%-ը,
- 2) նախագծի տեսանելիության և իրազեկվածության բարձրացում, որը կազմում է ընդհանուր ծախսի 11%-ը, (նպատակը և՛ նոր շահառուների, և՛ նոր հանգանակությունների ներգրավումն է, ինչպես նաև նախագծի գործունեության թափանցիկության ապահովումը, տեսանելիությունը և հաշվետվողականությունը),
- 3) վարչական ծախսեր, որոնք կազմում են ընդհանուր ծախսի 26%-ը (ներառում է նախագծի գործառնական վարումը, շահառուների հետ անհատական աշխատանքը և հաղորդակցումը, գործընկերների հետ շարունակական համագործակցությունը, հետազոտությունները և գեկույցները, պարբերական գնահատումներն ու մշտադիտարկումը):

Ստորև ներկայացված է մանրամասն ֆինանսական կատարողականը: Անհրաժեշտ է նշել, որ տարվա ստացված միջոցների մոտ 1/5-րդը դեռևս ծախսված չէ, սակայն հաշվարկված է՝ ելնելով ընթացիկ դասընթացների վճարումների հաշվարկից, որի շուրջ ձեռք է բերվել պայմանավորվածություն մատակարարների հետ: Վճարումները կիրականացվեն յուրաքանչյուր դասընթացի ավարտից հետո՝ մինչև 2023թ. մարտ ամիս:

Հաշվետու ժամանակաշրջան - 01/01/2022 - 31/12/2022

1		Նվիրատվություն				Փաստացի մուտք (ՀՀԴ)	
1.1	«ՌեԱրմենիա» բարեգործական հիմնադրամ					5,200,000	
1.2	«Երևան իմ սեր» հիմնադրամ					30,000,000	
1.3		Ընդամենը				35,200,000	
2		Վարչական ծախսեր				Փաստացի ծախս (ՀՀԴ)	
2.1	Նախագծի համակարգման ադմինիստրատիվ ծախսեր					4,271,070	
2.2	Վճարված հարկեր					3,610,203	
2.3	Այլ ծախսեր					1,343,660	
2.4		Ընդամենը				9,224,933	
3		Տեսանելիության բարձրացում և իրազեկում				Փաստացի ծախս (ՀՀԴ)	Սպասվող ծախս (ՀՀԴ) *
3.1	Հաղորդակցում, տեղեկատվության տարածում, հոլովակներ և տեսանելիության բարձրացում					3,020,000	800000
3.2		Ընդամենը				3,020,000	800,000
4	Դասընթացներ և կրթական ծրագրեր	Դասընթացների քանակ	Մատակարարների քանակ	Անվճար մասնակիցների քանակ	Վճարովի մասնակիցների քանակ	Փաստացի ծախս (ՀՀԴ)	Սպասվող ծախս (ՀՀԴ) *
4.1	Մասնագիտական կողմնորոշում/ուղղորդում	-	-	50	270	3,240,000	-
4.2	SS	22	15	45	7	190,000	400,000
4.3	ՄՌ և կառավարում, ձեռներեցություն	3	2	17	-	-	375,000
4.4	Մարքեթինգ և վաճառք	1	1	-	10	250,000	500,000
4.5	Դիզայն և ճարտարապետություն	3	2	16	-	-	-
4.6	Ֆինանսներ	2	1	3	-	-	415,000
4.7	Գյուղատնտեսություն	2	2	5	2	345,192	-
4.8	Մեդիա ոլորտ	5	1	11	-	-	-
4.9	Տուրիզմ և լոգիստիկա	4	3	8	-	-	-
4.10	Ֆիզիոթերապիա և սպորտ	4	4	10	3	150,000	50,000
4.11	Փափուկ և կոշտ հմտություններ	8	3	8	52	7,500,000	-
4.12	Արհեստ և արվեստ	6	5	1	7	310,000	-
4.13	Անգլերեն	7	2	-	33	795,000	946,875
4.14	Վարորդական իրավունքի տեսություն և պրակտիկա	25	11	-	131	3,137,000	3,551,000
4.15 Ընդամենը		92	52	124	245	15,917,192	6,237,875
						28,162,125	7,037,875
Ընդամենը ծախս						35,200,000	

* սյուժակում նշված են այն ծախսերը, որոնց շրջանակներում արդեն իրականացվում են դասընթացներ, սակայն դրանց վճարումը կատարվելու է 2023թ. հունվար-մարտ ամիսներին՝ դասընթացների ավարտից հետո:

2023թ. մեր գործունեության ուղղությունները

Հարկ է նշել, թե ինչ մարտահրավերների ենք մենք բախվում, մասնավորապես.

- ✓ շահառուների մի մասի մոտ առկա է մոտիվացիայի խնդիր, որը պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ սկսած ընտանիքի սոցիալական վիճակից, վերջացած աշխարհայացքով,
- ✓ այն շահառուները, որոնք ունեն բարձր մոտիվացիա, պատրաստ են անվերջ մասնակցել տարբեր դասընթացների,
- ✓ մեր շահառուները ևս բախվում են հայաստանյան աշխատաշուկայում առկա բոլոր խնդիրներին, երբեմն էլ ավելին՝ կախված իրենց առողջական վիճակից և կարիքներից:

Հիմնվելով գրեթե երկու տարվա մեր աշխատանքային փորձի, հետազոտության արդյունքների, կարիքների գնահատման, շահառուների հետ ֆոկուս-խմբերի ընթացքում դուրս բերված հարցերի վրա՝ ստորև ներկայացնում ենք 2023թ.-ի համար նախատեսված աշխատանքների ուղղությունները: Այսպիսով, 2023թ.-ին նախագծի զարգացումը պլանավորվում է հետևյալ ուղղություններով.

- ավելի կենտրոնանալ ուսումնական ծրագրերի և մասնագիտական կողմնորոշման վրա, կազմակերպել մարդուն աշխատաշուկայում ավելի մրցունակ դարձնող փափուկ և կոշտ հմտությունների զարգացման դասընթացներ,
- շարունակել օժանդակել շահառուներին լեզուների տիրապետման և վարորդական հմտությունների զարգացման գործընթացում, քանի որ դրանք ուղղակիորեն բարձրացնում են աշխատանքի տեղավորման հավանականությունը,
- շահառուների առավել մոտիվացված մասին տալ կոնկրետ մասնագիտական զարգացում և/կամ մասնագիտացում իրենց գործունեության կամ երազանքի ոլորտում՝ նաև առանձին ուշադրություն դարձնելով SS ոլորտին,
- այն շահառուներին, որոնք ձեռներեցության փորձեր են անում, տրամադրել բիզնեսի վարման տարբեր գիտելիքներ՝ դյուրացնելով այդ գործընթացը,
- շարունակաբար իրականացնել շահառուների կարգավիճակի և կարիքների մշտադիտարկում՝ որակական և քանակական հետազոտությունների միջոցով,
- ներկայացնել հանրությանը սոցիալ-կրթական հոլովակներ (առնվազն 5 հատ), որոնք կնպաստեն հասարակության իրազեկվածության

բարձրացմանը և պատերազմի մասնակցած անձանց խնդիրները լսելի դարձնելուն:

Վերը նշված ուղղություններին զուգահեռ իրականացվելու են հետևյալ ուղեկցող աշխատանքներն ըստ անհրաժեշտության.

- ✓ շարունակական համագործակցություն ոլորտում գործունեություն ծավալող կառույցների հետ,
- ✓ պատերազմի մասնակիցներին ուղղված ծրագրերի մասին տեղեկատվության տրամադրում շահառուներին,
- ✓ շահառուների խնդիրները ներկայացնող ամփոփ զեկույցների մշակում և ներկայացում համապատասխան կառույցներին:

Նախագծի առանցքային ազդեցությունն այն է, որ մեր շահառուները ձեռք են բերում նոր գիտելիքներ և զարգացնում հմտություններ՝ դառնալով առավել մրցունակ: Սա նաև անուղղակի, բայց կարևոր ազդեցություն ունի շահառուների ընտանիքի անդամների, ինչպես նաև հասարակության ընդհանուր բարեկեցության վրա: Նախագծի ազդեցության մեկ այլ ասպեկտ է հոգեբանական գործոնը, քանի որ նախագիծն անուղղակիորեն նպաստում է ՀՏՄՀ-ի հաղթահարմանը:

Ամփոփելով նախագծի մեկնարկից առ այսօր իրականացված աշխատանքները՝ կարող ենք արձանագրել հետևյալ արդյունքները.

- ✓ կազմակերպված և իրականացված մասնագիտական, փափուկ և կոշտ հմտությունների զարգացման, մասնագիտական կողմնորոշման բազմաթիվ դասընթացներ և ծրագրեր,
- ✓ համագործակցություն տարբեր հասարակական կազմակերպությունների, ընկերությունների, պետական կառույցների և անհատների հետ,
- ✓ նոր շահառուների չընդհատվող հոսք,
- ✓ շահառուների գոհունակության և վստահության բարձր ցուցանիշ,
- ✓ դաշտի կարգավորմանն ուղղված աշխատանքներ՝ հետազոտությունների և զեկույցների տեսքով:

Կարող ենք փաստել, որ եղել ենք պատերազմի մասնակիցների հետ աշխատանքների նախաձեռնման և իրականացման առաջամարտիկներից:

Հայաստանի ՄՌ Ասոցիացիայի մասին

«Նոր Էջ» նախագծի հեղինակն ու իրականացնողը «ՄՌ Ասոցիացիա» մարդկային ռեսուրսների կառավարման հասարակական կազմակերպությունն է:

ՄՌ Ասոցիացիան, որպես հասարակական կազմակերպություն, հիմնադրվել է 2010թ. մայիսի 19-ին: Ասոցիացիայի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում զարգացնել մարդկային ռեսուրսների մասնագիտական համայնքը: Ներկայումս Ասոցիացիան, որպես ՀԿ, ունի 600-ից ավել անդամներ և հետևորդներ, այդ թվում՝ Հայաստանի առաջատար ընկերությունների ՄՌ ղեկավարներ, տնօրեններ, խորհրդականներ, նեղ և ընդհանուր մասնագետներ, թերյներներ, ուսանողներ:

Ասոցիացիան գործում է չորս հիմնական ուղղություններով՝ ՄՌԿ դաշտի բարելավում, առաջարկի և պահանջարկի համապատասխանեցում, մասնագիտական զարգացում, ՄՌ խորհրդատվություն:

Տարիների գործունեության ընթացքում Ասոցիացիայի թիմի կողմից մշակվել և իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, ինչպիսիք են ՄՌ մասնագետների վերապատրաստումներն ու վարպետաց դասերը, ՄՌ ղեկավարների միջազգային հավաստագրումները, տարեկան տարածաշրջանային ՄՌ համաժողովները: Ինչպես նաև, ՄՌ Ասոցիացիայի աջակցությամբ ԵՊՀ-ում բացվել է առաջին ՄՌ մագիստրոսական ծրագիրը:

Կազմակերպությունը շարունակում է իր ակտիվ գործունեությունը:



ARMENIAN
HR ASSOCIATION

«ՄՌ Ասոցիացիա» ՀԿ
ք. Երևան, Արամի 80
+374 98 58 46 96
www.hrcommunity.am